

ղանեանց (տես «Լուսնայ. թիֆլիզ», 1900, Գիրք Ա. էջ 273—4) այս վերնագրով. «Կրթութիւն տետր ջերմեռանդութեան աղօթից, ժողովեալ եւ յարմարեալ ի Ոսմուշէ շնչին անիմաստ Աբեղայէ եւ վերատեսչուէ Պրուսայու, ի հայրապետութեան Տ. Յակոբայ աշնից Հայոց Կաթողիկոսի Համախեցոյ, յամի Տեառն 1760 յունվարի 3, իսկ Հայոց 1209, ի Պրուսա քաղսքի ի Ս. Աստուածածնի եկեղեցւոյ: Միքայէլ քհն. Աշխան վերջերս գրեց («Արևելք», 1908, թ. 6751), թէ Սամուէլ Եպ. Պոլիս հաստատուելէն ետեւ՝ (երբ արդէն 1776ին Հռոմէն վերադարձած եւ 1778ին աթոռէն հրաժարած էր,) 1779ին Տնանկ Աղքատաց անտուկին յանձնեց 2500 զր. որպէս զի ասոր տոկոսով իր մահուընէն վերջը աղքատ դասակարգէ որբ աղջկան մը հարսանեկան օժիտը պատրաստուի:

Իսկ միւսներու վրայ հետեւեալ տեղեկութիւնները ժողված եմ:

Յովհաննէս Դասպալէն, Մարտինի չորրորդ հայ կաթողիկեայ Արքեպիսկոպոսն՝ էր եղբորորդի առաջին հայ կաթողիկեայ Արքեպ. Մեւքոն Դասպասեանի: Վերջինս Բրօքալանտայի աշակերտ էր եւ 1684ին Մարտինի ամբողջ հայ հասարակութիւնը կաթողիկեայ ըրած եւ ինքն 1716ին ի Կ.Պոլիս նահատակուած է: Յովհաննէս ծնած է 1715 Յունուար 21ին Մարտին, 1735 Մայիս 30ին Հռոմ գացած եւ Բրօքալանտայի աշակերտած է, 1746ին ի Հռոմ Ս. Մարիամ Ե-